041.0585.300616

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2016 թվականի N 585-Ա

## «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշման 1-ին կետի`

1. Հաստատել`

1) «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն) կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը` համաձայն N 1 հավելվածի.

2) «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-50-Ն) կիրարկումն ապահովող միջոցառման ցանկը` համաձայն N 2 հավելվածի:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ վարչապետի
2016 թվականի հունիսի 30-ի
N 585-Ա որոշման

ՑԱՆԿ
### «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | «Վերասոցիալականացման միջոցառումների մշակման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2016 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. | «Պրոբացիայի պետական ծառայության տվյալների շտեմարանի մեջ ներառվող տեղեկությունների հավաքման և օգտագործման ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն | 2016 թվականի հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 3. | «Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 2016 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4. | «Պրոբացիայի պետական ծառայության կողմից թարգմանչի ներգրավման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն | 2016 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 5. | «Պրոբացիայի պետական ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն | 2016 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 6. | «Պրոբացիայի պետական ծառայության ներքին | ՀՀ արդարադատության նախարարություն | 2016 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | | | |
| 7. | «Պրոբացիայի պետական ծառայության կամավորներին ներկայացվող չափանիշները և նրանց ներգրավման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2016 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
2016 թվականի հունիսի 30-ի
N 585-Ա որոշման

ՑԱՆԿ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ**

| NN ը/կ | Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը |
|---|---|---|---|---|
| 1. | «Հանրային աշխատանքների ներգրավման կարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2016 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |